


Բարվի խնդիրը գերմանական ռազմաքաղաքական ծրագրերում (1918 թ.)

Պետրոսյան Նուշիկ Բ.

ասպիրանտ, միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դասախոս, Երևանի պետական համալսարան;

հետազոտող, Սոցիալական և վարքաբանական հետազոտությունների կենտրոն, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0000-0002-2843-8202>
nushik.petrosyan@ysumail.am

ՀՏԳ 327; EDN: FXHKOL

DOI: 10.58587/18292437-2026.1-17

Հանգուցաբառեր և բառակապակցություններ Գերմանիա, Բարու, Անդրկովկաս, Առաջին համաշխարհային պատերազմ, գերմանա-թուրքական մրցակցություն, ռազմաքաղաքական ծրագրեր

Бакинский вопрос в германских военно-политических планах (1918 г.)

Петросян Нушик Б.

Аспирант, преподаватель, Кафедра международных отношений и дипломатии, Факультет международных отношений, Ереванский государственный университет;

Исследователь, Центр социальных и поведенческих исследований, Армянский государственный экономический университет (Ереван, РА)

Аннотация. В 1918 году Баку превратился не только в центр локальных конфликтов, но и в ключевой узел международных военно-политических программ. Нефтяные ресурсы города, транспортная инфраструктура (ось Баку–Тифлис–Батум) и выход к Каспийскому морю сделали Баку энергетическим и логистическим центром, контроль над которым мог изменить региональный баланс сил. На завершающем этапе Первой мировой войны Германия, стремясь укрепить свои позиции в Закавказье, рассматривала Баку как источник экономических ресурсов и одновременно как стратегический коридор к Каспийскому бассейну и Центральной Азии. Однако германские планы сталкивались с более широкими пан-тюркистскими и милитаризованными целями союзной Османской империи.

В статье анализируется место Баку в германских военно-политических расчётах на основе сопоставления дипломатических документов, военных донесений, политических оценок современников и историографических исследований. Особое внимание уделяется германо-турецким противоречиям, политике германского «покровительства» в отношении Грузии, а также тем ограничениям, которые не позволили Берлину реализовать свои планы вокруг Баку в условиях окончания войны и стремительно меняющейся политической обстановки.

Ключевые слова и словосочетания: Германия, Баку, Закавказье, Первая мировая война, германо-турецкое соперничество, военно-политические планы

The Baku Question in German Military-Political Plans (1918)

Petrosyan Nushik B.

Researcher of the Center for Social & Behavioral Research, Armenian State University of Economics, Postgraduate student, lecturer of the Chair of International Relations and Diplomacy,

Yerevan State University (Yerevan, RA)

Abstract. In 1918, Baku emerged not only as a center of local conflicts but also as a key focal point of international military-political strategies. The city's oil resources, transportation infrastructure (the Baku–Tiflis–Batumi axis), and access to the Caspian Sea turned Baku into a major energy and logistical hub, control over which had the potential to alter the regional balance of power. During the final phase of the First World War, Germany, seeking to strengthen its position in Transcaucasia, viewed Baku both as a source of economic resources and as a strategic gateway to the Caspian basin and Central Asia. However, German plans collided with the broader pan-Turkist and militarized objectives of its ally, the Ottoman Empire.

This article analyses the role of Baku in German military-political calculations based on a synthesis of diplomatic documents, military reports, contemporary political assessments, and historiographical studies. Particular attention is paid to German–Ottoman contradictions, Germany's policy of “protectorate” over Georgia, and the constraints that prevented Berlin from implementing its plans regarding Baku in the context of the war's conclusion and the rapidly changing political environment.

Keywords & phrases: Germany, Baku, Transcaucasia, World War I, German–Turkish rivalry, military-political plans

Ներածություն

Բաքվի խնդրի ուսումնասիրությունը 1918 թ գերմանական քաղաքականության և ռազմաքաղաքական ծրագրերի համատեքստում ներկայացված է ինչպես գերմանական, այնպես էլ միջազգային պատմագրության մեջ, սակայն թեման հանախ լուսաբանվում է կամ որպես Առաջին համաշխարհային պատերազմի «Կովկասյան ուղղության» ընդհանուր դրվագ, կամ որպես գերմանա-թուրքական դաշնակցային հարաբերությունների լարվածության արտահայտություն՝ առանց Բաքվի շուրջ գերմանական հաշվարկների համապարփակ քննության: Հատկապես սահմանափակ է ներկայացված այն հարցը, թե ինչ դեր ուներ Բաքուն գերմանական ռազմավարական մտածողության մեջ՝ միաժամանակ որպես նավթային ռեսուրս, լոգիստիկ միջանցք և ազդեցության գոտիների սահմանագծման գործիք:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտական փուլը Կովկասը վերածեց մեծ տերությունների մրցակցության նոր թատերաբեմի: Ռուսական կայսրության փլուզումը, հեղափոխությունից հետո առաջացած ուժային վակուումը, քաղաքացիական պատերազմի տարածումը և Անդրկովկասյան նոր քաղաքական կենտրոնների ձևավորումը ստեղծեցին այնպիսի միջավայր, որտեղ արտաքին դերակատարների ծրագրերը կարող էին համեմատաբար արագ նյութականանալ՝ օգտագործելով տեղական ուժերի խոցելիությունը, ռազմական քառուր և պետական կառույցների փխրունությունը: Այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն ստացավ Բաքուն՝ որպես նավթարդյունահանման ու վերամշակման համաշխարհային կենտրոններից մեկը, ինչպես նաև որպես Կասպից ծովի և տարածաշրջանային հաղորդակցությունների վերահսկման կարևոր հանգույց:

Բաքվի կարևորությունը 1918 թվականին միաժամանակ հենվում էր երեք առանցքային գործոնների վրա: Առաջին՝ Էներգետիկ և տնտեսականգործոնն էր. պատերազմը կտրուկ բարձրացրել էր վառելիքի՝ հատկապես նավթի ռազմավարական արժեքը: Նավթը այլևս պարզապես տնտեսական ապրանք չէր. այն դարձավ ռազմական շարժունակության, ռազմական արդյունաբերության և լոգիստիկ կայունության հիմնարար ռեսուրս: Գերմանիան, զգալով վառելանյութի սղության հետևանքները և գիտակցելով պատերազմից հետո հնարավոր տնտեսական վերականգնման Էներգետիկ հիմքի կարևորությունը, Բաքուն դիտարկում էր որպես երկարաժամկետ շահերի գոտի: Երկրորդ՝ ռազմաքաղաքական և աշխարհագրական գործոնն էր. Բաքուն վերահսկելով հնարավոր էր վերահսկել Կասպից ավազանի հաղորդակցային ուղիները, ներգործել դեպի Միջին Ասիա և

սահմանափակել մրցակիցների՝ թե՛ բուլղարիայի, թե՛ արևմտյան (հետագայում նաև բրիտանական) ազդեցությունը: Երրորդ՝ դաշնակցային հակասությունների հարթակ լինելու հանգամանքը. թեև Գերմանիան և Օսմանյան Թուրքիան պաշտոնապես դաշնակիցներ էին, Բաքվի հարցում նրանց նպատակադրումները էապես տարբեր էին: Օսմանյան ռազմաքաղաքական դեկավարությունը Բաքուն կապում էր պայթյունաբեկական ծրագրերի և ռազմական առաջխաղացման տրամաբանության հետ, մինչդեռ Բեռլինը նախընտրում էր ապահովել վերահսկողություն ավելի շատ տնտեսական և դիվանագիտական մեխանիզմներով՝ միաժամանակ զսպելով թուրքական մենաշնորհային դիրքերի ձևավորումը Կովկասում: Այդ հակասությունը ոչ միայն սահմանափակեց գերմանական գործիքակազմը, այլև վերափոխեց Բաքվի խնդիրը՝ դարձնելով այն դաշնակիցների ներսում մրցակցության և «ազդեցության գոտիների» սահմանագծման հարցի:

Այս հոդվածի նպատակն է ցույց տալ, թե ինչպես և ինչու Բաքուն ընդգրկվեց գերմանական ռազմաքաղաքական ծրագրերում 1918 թ., ինչ գործիքներով էր Բեռլինը փորձում առաջ տանել իր շահերը, և ինչ հանգամանքներ խոչընդոտեցին այդ ծրագրերի լիարժեք իրագործմանը: Հոդվածը միաժամանակ փորձում է տեղավորել Բաքվի խնդիրը ավելի լայն «կովկասյան ծրագրի» շրջանակում՝ դիտարկելով Վրաստանի հետ համագործակցության գերմանական ռազմավարական իմաստը, գերմանա-թուրքական հակասությունների տրամաբանությունը, ինչպես նաև Բաքվի ճակատագրի փոփոխության պատճառահետևանքային շղթան:

Մեթոդաբանություն

Հոդվածը հիմնված է պատմագիտական մեթոդաբանության վրա՝ կիրառելով աղբյուրագիտական քննություն և բովանդակային վերլուծություն:

Վերլուծությունը կառուցված է պատճառահետևանքային տրամաբանությամբ՝ բացահայտելու համար, թե ինչ պայմաններում Բաքուն դարձավ գերմանական քաղաքականության առաջնահերթություն, ինչ գործիքակազմով էր Բեռլինը փորձում հասնել իր նպատակներին (դիվանագիտական միջնորդություն, Վրաստանի հետ պայմանագրային հարաբերություններ, ազդեցության գոտիների սահմանագծում, տնտեսական պայմանավորվածություններ), և ինչ սահմանափակումներ առաջացան դաշնակցային հարաբերությունների ներսում և տարածաշրջանային ուժային հավասարակշռության փոփոխության հետևանքով:

Կիրառվել է նաև համեմատական մոտեցում՝ գերմանական և օսմանյան ռազմավարությունների նպատակների ու մեթոդների տարբե-

րությունները ցույց տալու համար՝ առանձնացնելով ռազմական վերահսկողություն և տնտեսական-դիվանագիտական վերահսկողություն հակադրությունը, ինչպես նաև դրանց ազդեցությունը Բաքվի ճակատագրի վրա:

1918 թ. աշխարհաքաղաքական դրությունը և Բաքվի ռազմավարական նշանակությունը

1918 թվականը Անդրկովկասի ժողովուրդների համար շրջադարձային ժամանակաշրջան էր՝ պայմանավորված Առաջին համաշխարհային պատերազմի ավարտական փուլով, ռուսական հեղաշրջումից հետո առաջացած ուժային վակուումով և նոր պետական կազմավորումների ի հայտ գալով: Այս պայմաններում Բաքվի ռազմավարական նշանակությունը կտրուկ աճեց՝ պայմանավորված թե՛ նավթային պաշարներով, թե՛ աշխարհագրական դիրքով: Անդրկովկասը Գերմանիայի համար դիտարկվում էր որպես տնտեսական և քաղաքական ազդեցության հնարավոր գոտի, որտեղ կարելի էր ամրագրել շահեր՝ առանց անմիջական տարածքային վերահսկողության հաստատման [1, էջեր 473-478]:

Պանթուրքիստական աշխարհաքաղաքական նախագծերի ձևավորման փուլում Բաքուն ձեռք էր բերում լրացուցիչ արժեք. այն ընկալվում էր որպես կապող օղակ Օսմանյան Թուրքիայի, կովկասյան թյուրքական էլիտաների և դեպի Միջին Ասիա հնարավոր ընդլայնման միջև: Այդ պատճառով քաղաքը վերածվում էր մրցակցող ուժային կենտրոնների գործողությունների խաչմերուկի:

Միաժամանակ, բոլշևիկյան քաղաքական հաշվարկներում Բաքուն դիտարկվում էր որպես առանցքային հենակետ՝ տարածաշրջանի խորհրդայնացման և նախկին կայսրական տարածքների վերահսկողությունը վերականգնելու տեսանկյունից: Մուսավաթական քաղաքական նախագծում էլ քաղաքը ստանում էր ինքնության ձևավորման և պետականության խորհրդանշական կենտրոնի դեր՝ մարմնավորելով «ազգային իդեալի» տարածական և հոգեբանական առանցքը: Այս բազմակենտրոն մրցակցության պայմաններում Բաքվի շուրջ ձևավորվում էր ուժերի բարդ ճարտարապետություն, որտեղ պանթուրքիստական ծրագրերը բախվում էին բոլշևիկյան իշխանության ռազմավարական նպատակների հետ:

1918 թ. Բաքվի շուրջ հակադրությունների տրամաբանությունը հասկանալու համար կարևոր է քաղաքը դիտարկել ոչ թե մեկ չափումով, այլ որպես միաժամանակ երեք փոխկապակցված համակարգերի հատման կետ: Նախ՝ Բաքուն էներգետիկ հարթության կենտրոն էր. նավթը պատերազմի վերջին փուլում վերածվել էր «ռազմական տնտեսության» առանցքային ռեսուրսի, և Բաքվի նկատմամբ վերահսկողու-

թյունը նշանակում էր ոչ միայն վառելանյութի հասանելիություն, այլև ռազմավարական ճկունություն՝ բանակի շարժունակությունից մինչև արդյունաբերական արտադրության կայունություն: Երկրորդ՝ Բաքուն հաղորդակցային-լոգիստիկ հանգույց էր. քաղաքը չէր նշանակվում միայն իր նավթով, այլ նաև այն ճանապարհներով, որոնցով նավթը հնարավոր էր դուրս բերել՝ հատկապես Բաքու-Թիֆլիս-Բաթում ուղղությամբ և Կասպից ավազանի ներքին հաղորդակցություններով: Երրորդ՝ Բաքուն խորհրդանշական և ինստիտուցիոնալ կենտրոն էր՝ տարբեր քաղաքական դերակատարների համար. բոլշևիկների համար՝ հեղափոխության տարածման հենակետ, Մուսավաթի համար՝ նոր ինքնության ու պետականության առանցք, իսկ Օսմանյան ռազմավարության մեջ՝ պանթուրքիստական նախագծի «դարպաս» դեպի ավելի լայն տարածքներ: Հենց այս երեք հարթությունների համընկնումն է, որ Բաքուն դարձնում է ոչ թե հերթական քաղաք, այլ ուժերի փոխազդեցության այնպիսի կենտրոն, որտեղ տեղային քաղաքականությունը մշտապես «անցնում» է միջազգային ծրագրերի տրամաբանության մեջ:

Լարվածությունն առավել խորանում էր այն հանգամանքով, որ Բաքվի խորհրդային իշխանությունը՝ Ստեփան Շահումյանի ղեկավարությամբ, տարածաշրջանի որոշ թյուրքական և վրացական քաղաքական շրջանակների կողմից ընկալվում էր որպես հայ քաղաքական ուժերին մոտ կանգնած կառույց: Այս ընկալումը 1918 թ. մարտ-ապրիլ ամիսներին քաղաքում ծավալվող իրադարձություններին հաղորդեց ոչ միայն գաղափարական, այլև ազգային հակադրությամբ պայմանավորված բնույթ՝ վերածելով Բաքվի շուրջ պայքարը տարածաշրջանային քաղաքական օրակարգի առանցքային գոտում տեղի ունեցող բազմաշերտ մրցակցության:

Բաքվի վերահսկողության համար պայքարի նախադրյալները ձևավորվում էին դեռևս 1917 թ. դեկտեմբերից մինչև 1918 թ. հունվարն ընկած շրջանում՝ Անդրկովկասյան երկաթուղու երկայնքով ստեղծված պայթյունավտանգ իրավիճակի պայմաններում: Այդ փուլում հակառուսական և հակահայկական գործողությունները (այդ թվում՝ Շամխորի դեպքերը), ինչպես նաև Երևանի նահանգում թուրքական ու քրդական զինված խմբերի ապստամբությունները խորացնում էին անիշխանությունն ու անվտանգության ճգնաժամը: Տարածաշրջանում բռնությունների և տեղահանումների անը նպաստում էր թշնամանքի ընդհանուր մթնոլորտի խորացմանը, ինչի քաղաքական հետևանքներից մեկը դարձավ ուժային հավասարակշռության փլուզման փուլը՝ 1918 թ. Բաքվի մարտյան ընդհարումների համատեքստում:

Սակայն Բաքվի շուրջ պայքարը միայն տեղական լարվածությունների և քաղաքային իշխանության փոփոխության խնդիր չէր: 1918 թ վերջին պատերազմի փուլում եվրոպական մեծ տերությունների քաղաքականությունը գնալով ավելի շատ կառուցվում էր «ռեսուրսային հաշվարկների» և ազդեցության գոտիների վերագնահատման վրա: Բրեստ-Լիտովսկից հետո Կովկասը դարձավ այն տարածքներից մեկը, որտեղ հնարավոր էր՝ նվազագույն «կայսերական ներկայությամբ» ստանալ ռազմավարական առավելություններ՝ պայմանագրային, դիվանագիտական կամ միջնորդավորված վերահսկողության միջոցով: Այս տրամաբանության մեջ Գերմանիայի համար կարևոր էր ոչ միայն այն, թե ով է տվյալ պահին վերահսկում քաղաքը, այլ՝ ինչպիսի «կառավարման ռեժիմ» կարող է ապահովել նավթի կայուն հոսք, ճանապարհների անվտանգություն և արտաքին մրցակիցների (առաջինը՝ բոլշևիկների, հետո նաև՝ բրիտանացիների) սահմանափակում: Այլ կերպ ասած՝ Բաքվի հարցը գերմանական ռազմավարության մեջ սկսում է գործել որպես «կենտրոնացված խնդիր», որի լուծումը ենթադրում էր միաժամանակ տնտեսական ձեռքբերում, դաշնակցային հավասարակշռում և տարածաշրջանային ազդեցության ձևավորում: Այսպիսով, երբ մենք անցնում ենք գերմանական շահերի նկարագրությանը, կարևոր է տեսնել, որ Բեռլինի օրակարգում Բաքուն չէր դիտարկվում միայն որպես թիրախ, այլ՝ որպես լայն կովկասյան ծրագրի հանգուցային հանգույց:

Առաջին համաշխարհային պատերազմի վերջին փուլում միջազգային քաղաքական գործընթացների բնույթը զգալիորեն փոխվում է՝ անցնելով դասական ռազմական դիմակայության շրջանակներից դեպի այն, ինչ Ադամ Թուրք բնորոշում է որպես «մեծ պատերազմ ժողովրդավարության պայմաններում» [10, էջեր 1-10]: Պատերազմի ընթացքում և հատկապես դրա ավարտական փուլում ռազմական հաջողությունը և քաղաքական ազդեցությունը ավելի ու ավելի էին կախված ոչ թե միայն ճակատային գործողություններից, այլ պետությունների կարողությունից՝ վերահսկելու տնտեսական ռեսուրսները, լոգիստիկ համակարգերը և ռազմավարական հաղորդակցությունները: Այս տեսանկյունից պատերազմը դառնում է ոչ միայն զինված բախում, այլ նաև քաղաքական տնտեսության համակարգային ճգնաժամ, որտեղ ռեսուրսների հասանելիությունն ու դրանց վերահսկողությունը վերածվում են իշխանության իրական գործիքների:

Պատերազմող տերությունները գործում էին սահմանափակ ռազմական հնարավորությունների պայմաններում և ստիպված էին փոխհատուցել այդ սահմանափակումները դիվանագիտական,

գիտական, պայմանագրային կամ միջնորդավորված վերահսկողության մեխանիզմներով: Նրա մոտ ռեսուրսները՝ ներառյալ վառելանյութը, տրանսպորտային ենթակառուցվածքները և արդյունաբերական մատակարարման շղթաները, հանդես են գալիս որպես ռազմաքաղաքական լծակներ, որոնք թույլ էին տալիս պետություններին ազդել ոչ միայն սեփական ռազմական կարողությունների, այլ նաև մրցակիցների և դաշնակիցների վարքագծի վրա: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս Առաջին համաշխարհային պատերազմը դիտարկել որպես անցումային փուլ, որտեղ կայսերական ուժերը ստիպված էին վերահիմաստավորել ազդեցության ձևերը՝ տարածքային օկուպացիայից անցնելով ռեսուրսների և հաղորդակցությունների վերահսկման ավելի ճկուն մոդելների:

Այս շրջանակում Անդրկովկասը և հատկապես Բաքուն կարող են ընկալվել որպես այն տարածքներից մեկը, որտեղ Թուրքի նկարագրած քաղաքական-տնտեսական տրամաբանությունը ստանում է կոնկրետ աշխարհագրական և ռազմավարական ձևավորում: Բաքվի նավթը չէր դիտարկվում միայն որպես տնտեսական արժեք ունեցող ռեսուրս. այն պատերազմի վերջին փուլում վերածվել էր ուժերի հավասարակշռությունը փոխելու հնարավոր գործոնի: Այդ իսկ պատճառով նավթային կենտրոնների վերահսկումը կապվում էր ոչ միայն ռազմական կարիքների, այլ նաև հետպատերազմյան քաղաքական կարգավորման հաշվարկների հետ: Թուրքի տեսանկյունից նման տարածքները դառնում էին «բարձր արժեքի հանգույցներ», որոնց նկատմամբ վերահսկողությունը թույլ էր տալիս ազդել ավելի լայն տարածաշրջանային և նույնիսկ գլոբալ գործընթացների վրա:

Գերմանիայի քաղաքականությունը 1918 թ. այս տրամաբանության մեջ կարող է մեկնաբանվել որպես փորձ՝ ներգրավվել ռեսուրսային իշխանության նոր մոդելում՝ առանց լայնածավալ ռազմական օկուպացիայի: Բեռլինը ձգտում էր վերահսկել ոչ թե ամբողջ տարածքը, այլ դրա ռազմավարական բաղադրիչները՝ նավթը, հաղորդակցային ուղիները և պայմանագրային պարտավորությունները: Այս մոտեցումը լիովին համահունչ է Թուրքի այն դիտարկմանը, որ պատերազմի վերջնափուլում պետությունների ռազմավարությունը ավելի ու ավելի էր կառուցվում տնտեսական ճնշման, դիվանագիտական պայմանավորվածությունների և ռեսուրսների վերահսկման շուրջ, այլ ոչ միայն ռազմական հաղթանակների:

Բաքվի խնդիրը պետք է դիտարկել ոչ թե որպես բացառապես տեղային կամ դաշնակցային հակասության արդյունք, այլ որպես Առաջին համաշխարհային պատերազմի քաղաքական տնտեսության տրամաբանական արտա-

հայտնություն: Բաքուն հանդես էր գալիս որպես այնպիսի ռազմավարական հանգույց, որտեղ ռեսուրսը, լոգիստիկան և քաղաքական ազդեցությունը միավորվում էին մեկ կետում՝ դարձնելով քաղաքը միջազգային մրցակցության օբյեկտ ոչ միայն տարածաշրջանային, այլ նաև համաեվրոպական ռազմավարական հաշվարկներում:

Գերմանական շահերը Բաքվում նախ և առաջ կապվում էին նավթի վերահսկողության հետ: Բրեստ-Լիտովսկի պայմանագրից հետո (1918 թ. գարուն) Գերմանիան սկսեց ընդլայնել իր ազդեցության հնարավորությունները Կովկասում՝ արդիականացնելով Թիֆլիսում գործող ռազմական առաքելությունը՝ զեներալ Կրես ֆոն Կրեսենշտեյնի գլխավորությամբ, որի ուշադրության կենտրոնում էր նաև Բաքվի շուրջ ռազմավարական բանակցությունների ուղղությունը [3, էջեր 268–270]:

Բաքվի նավթի նշանակությունը պատերազմի պայմաններում չափազանց բարձր էր: Քաղաքը 1918 թ. համարվում էր նավթարտադրության խոշորագույն կենտրոններից մեկը. նավթը ռազմավարական ռեսուրս էր՝ առանց որի դժվար էր ապահովել բանակի շարժունակությունը, ավիացիան, զրահապատ տեխնիկան և արդյունաբերական բազայի կայուն աշխատանքը: Այս պայմաններում Բաքվի վերահսկողությունը դուրս էր գալիս զուտ տարածաշրջանային քաղաքականության սահմաններից և ձեռք էր բերում միջազգային ռազմավարական նշանակություն:

Գերմանիան, զգալով վառելիքի սղության հետևանքները և գիտակցելով, որ պատերազմից հետո վերականգնման տնտեսական հիմքը չի կարող կայուն լինել առանց էներգետիկ ռեսուրսների, ձգտում էր երկարաժամկետ դիրքավորվել Կասպից տարածաշրջանում [5, էջ 142]: Բաքվի նավթը դիտարկվում էր նաև որպես քաղաքական գործիք՝ Ռուսաստանի քաղաքացիական պատերազմի պայմաններում հնարավոր կողմերից որևէ մեկի նկատմամբ լծակային ազդեցություն ապահովելու կամ հավասարակշռում իրականացնելու նպատակով:

Այս տրամաբանության մեջ Գերմանիայի հիմնական նպատակները կարելի է ամփոփել հետևյալ կերպ.

1. ապահովել կայուն մուտք դեպի Բաքվի նավթային ռեսուրսներ և հնարավորության դեպքում՝ դրանց արագ տեղափոխումը Եվրոպա,

2. վերահսկել Բաքու–Թիֆլիս–Բաթում հաղորդակցային առանցքը՝ արտահանման անվտանգությունն ապահովելու համար,

3. սահմանափակել բոլշևիկների վերահսկողությունը ռազմավարական տարածաշրջանի նկատմամբ՝ կանխելով Ռուսաստանի «վերադարձը» դեպի Կասպից հանգույց,

4. զսպել Օսմանյան Թուրքիայի ուժեղացումը Կովկասում, քանի որ վերջինս ձգտում էր նավթին հասնել ինքնուրույն և առանց գերմանական վերահսկողության:

Նավթի ռազմավարական դերը Առաջին համաշխարհային պատերազմի համատեքստում պետք է ընկալել ոչ թե որպես երկրորդական տնտեսական գործոն, այլ որպես միջազգային քաղաքականության կառուցվածքային բաղադրիչ: 20-րդ դարի սկզբից նավթը աստիճանաբար վերածվում է ռազմաքաղաքական իշխանության հիմնասյունի. պետությունները, որոնք կարողանում էին վերահսկել նավթային կենտրոնները և դրանց տեղափոխման ուղիները, ձեռք էին բերում ոչ միայն ռազմական առավելություն, այլև քաղաքական ազդեցության լրացուցիչ լծակներ:

Առաջին համաշխարհային պատերազմը դարձավ այն պատմական շրջադարձը, երբ նավթի դերը փոխվեց որակապես: Եթե նախորդ փուլում նավթը հիմնականում տնտեսական կամ արդյունաբերական նշանակություն ուներ, ապա պատերազմի ընթացքում այն ուղղակիորեն կապվեց ռազմական կարողությունների հետ՝ ապահովելով բանակների շարժունակությունը, ավիացիայի զարգացումը, ռազմածովային ուժերի գործունակությունը և ռազմարդյունաբերական համալիրի կայուն աշխատանքը: Այս պայմաններում նավթային կենտրոնների վերահսկումը սկսեց դիտարկվել որպես ռազմավարական նպատակ ինքնին, ոչ թե որպես ռազմական հաջողության ենթադրյալ արդյունք:

Տեսական շրջանակը կարևոր է նաև այն առումով, որ նաև նավթը դիտարկվում է որպես քաղաքական ազդեցության գործիք, ոչ միայն որպես ռազմական մատակարարման աղբյուր: Նավթային ռեսուրսների նկատմամբ վերահսկողությունը թույլ էր տալիս պետություններին ազդել դաշնակիցների և հակառակորդների վարքագծի վրա, սահմանել պայմաններ, փոխել բանակցային դիրքերը և ձևավորել ազդեցության գոտիներ առանց բացահայտ ռազմական օկուպացիայի: Այս մոտեցումը հասկապես կիրառելի է այն տարածաշրջանների համար, որտեղ ռազմական ներկայությունը բարդ կամ ռիսկային էր, իսկ տնտեսական ու լոգիստիկ վերահսկումը՝ առավել իրագործելի:

Բաքվի նավթը չէր դիտարկվում միայն որպես վառելանյութի աղբյուր, այլ որպես այնպիսի ռեսուրս, որի վերահսկողությունը կարող էր ազդել պատերազմի վերջնափուլի ուժային հաշվեկշռի վրա և կանխորոշել հետպատերազմյան քաղաքական պայմանավորվածությունները: Նավթային կենտրոնի նկատմամբ վերահսկումը նշանակում էր ոչ միայն ռազմական առավելություն, այլ նաև հնարավորություն՝ ազդելու տարածաշրջանային իշխանության կառուցվածքի և

արտաքին դերակատարների հարաբերակցության վրա [11, էջեր 1–15]:

Գերմանիայի քաղաքականությունը 1918 թ. կարելի է մեկնաբանել հենց այս շրջանակում: Բեռլինը ձգտում էր ներգրավվել նավթային իշխանության ձևավորվող համակարգում՝ առանց լայնածավալ ռազմական օկուպացիայի, օգտագործելով դիվանագիտական պայմանավորվածությունները, հաղորդակցային ուղիների վերահսկումը և տեղական քաղաքական կառույցների հետ փոխգործակցությունը: Այս ռազմավարությունը պետք է դիտարկել ոչ թե որպես բացառիկ կամ իրավիճակային քայլ, այլ որպես ժամանակաշրջանին բնորոշ քաղաքական տնտեսության արտահայտություն, որտեղ ռեսուրսները վերածվում էին ռազմաքաղաքական ազդեցության հիմնական մեխանիզմների:

Բաքվի նավթային գործոնը կարելի է ներկայացնել որպես Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում ձևավորվող նոր միջազգային համակարգի կարևոր բաղադրիչ: Բաքվի հարցը այս շրջանակում դադարում է լինել միայն տեղային կամ տարածաշրջանային հակամարտության արդյունք և վերածվում է ռեսուրսային իշխանության համաշխարհային մրցակցության կոնկրետ դրսևորման:

Գերմանա-թուրքական հակասությունը կարևոր է ներկայացնել ոչ թե որպես իրավիճակային անհամաձայնություն, այլ որպես կառուցվածքային հակադրություն, որն ինքնին բխում էր երկու դաշնակիցների պատերազմի վերջնափուլի տարբեր ռազմավարական պատկերացումներից: Օսմանյան ռազմաքաղաքական ղեկավարությունը Կովկասում գործել է «տարածքային-ռազմական» տրամաբանությամբ՝ առաջխաղացումը և վերահսկողությունը դիտարկելով որպես պանիսլամական/պանթուրքիստական նախագծի նյութականացում և որպես ապագա տարածաշրջանային դիրքերի ամրապնդում: Գերմանիայի մոտեցումը ավելի շատ «կոնտրոլ-առանց-օկուպացիայի» տրամաբանության մեջ էր. Բեռլինը ձգտում էր ազդել հաղորդակցությունների, պայմանագրերի, տեղական իշխանությունների և տնտեսական լծակների միջոցով՝ նվազագույն ռազմական ծախսով ստանալ առավելագույն արդյունք: Այդ պատճառով նույն տարածքը՝ Բաքուն, երկու կողմերի մոտ ընկալվում էր տարբեր «կատեգորիաներով»:

Թուրքիայի համար՝ ռազմարշավի նպատակ, Գերմանիայի համար՝ ռեսուրսային և հաղորդակցային համակարգի վերահսկման հանգույց: Երբ նույն օբյեկտը դաշնակիցների համար ունի տարբեր ռազմավարական «բովանդակություն», ապա հակասությունը դառնում է կանխատեսելի, իսկ նույնիսկ գաղտնի համաձայնությունները (ազդեցության գոտիների բաժանում, դեմարկացիոն սահմաններ) դառնում

են ոչ թե լուծում, այլ ժամանակավոր մեխանիզմ՝ աճող մրցակցությունը կառավարելի դարձնելու համար: Հետևաբար, Բաքվի շուրջ զարգացումները կարելի է դիտարկել որպես դաշնակցային հարաբերությունների ներսում ուժերի վերադասավորման փորձ, որտեղ Գերմանիան փորձում էր սահմանել խաղի կանոնները, իսկ Օսմանյան Թուրքիան՝ փաստերով առաջանցել:

Գերմանա-թուրքական հակասությունը Բաքվի շուրջ. դաշնակիցների մրցակցությունը

Թեև Գերմանիան և Օսմանյան կայսրությունը դաշնակիցներ էին, Բաքվի և ընդհանրապես Անդրկովկասի շուրջ նրանց ռազմավարական շահերը հաճախ չէին համընկնում: Էնվեր փաշայի՝ պանթուրքիստական գաղափարներով պայմանավորված ծրագրերը նպատակ ունեին Բաքուն ներառել պանթուրքական տարածքներում՝ ուղի բացելով դեպի Միջին Ասիա [9, էջ 325-330]: Գերմանական կողմը, սակայն, հակված էր տնտեսական և դիվանագիտական մեթոդների միջոցով ամրագրել ազդեցություն՝ միաժամանակ խուսափելով այնպիսի իրավիճակից, որտեղ Կովկասը կվերածվեր թուրքական մենաշնորհային գոտու: Այդ պատճառով Բեռլինը փորձում էր հանդես գալ որպես «կայունացնող» դերակատար՝ հենվելով վրացական քաղաքական էլիտայի վրա և որոշ փուլերում նաև պահպանելով կապեր այլ տեղական ուժերի հետ՝ թուրքական գերակշռությունը սահմանափակելու տրամաբանությամբ [2, էջեր 63-66]:

Գերմանական ռազմական առաքելության ղեկավար Կրես ֆոն Կրեսենշտեյնը իր հաղորդագրություններում բազմիցս մատնանշել է թուրքական գործողությունների ինքնուրույնացման և գերմանական վերահսկողությունից դուրս գալու վտանգները [4, էջեր 112-118]: Ըստ էության, Բաքվի հարցում ձևավորվեց մոտեցումների հակադրություն.

- Օսմանյան Թուրքիան ձգտում էր **ուղղակի ռազմական վերահսկողության**,

- Գերմանիան՝ **տնտեսական-քաղաքական վերահսկողության**, առանց բացահայտ տարածքային տիրապետության հաստատման:

Գերմանական ռազմական առաքելության ղեկավարի հաղորդագրությունները կարևոր սկզբնաղբյուր են Կովկասում Գերմանիայի ռազմաքաղաքական հաշվարկների ըմբռնման համար, սակայն դրանց գիտական արժեքը առավել ամբողջական է դառնում քննադատական վերլուծության համատեքստում: Այդպիսի մոտեցմամբ արված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Կրես ֆոն Կրեսենշտեյնի հիշողություններում Թուրքիայի գործողությունները Բաքվի ուղղությամբ ներկայացվում են որպես գերմանական ռազմավարական ծրագրերից էապես շեղվող նախաձեռնություններ: Չեկույցներում

շեշտվում է, որ թուրքական ռազմական ղեկավարությունը գործում էր ինքնուրույն՝ հաճախ անտեսելով Բեռլինի դիրքորոշումն ու դիվանագիտական հաշվարկները, ինչն առաջացնում էր դաշնակիցների միջև լուրջ անվստահություն [7, էջեր 72-75]:

Ուսումնասիրության մեջ առանձնահատուկ ուշադրություն է դարձվում այն հանգամանքին, որ գերմանական կողմը Կովկասում իրեն դիտարկում էր ոչ թե որպես ուղղակի ռազմական գերիշխանություն հաստատող ուժ, այլ որպես կարգավորող դերակատար, որի հիմնական նպատակը ռազմավարական հանգույցների վերահսկումն էր՝ նավթային կենտրոնների, հաղորդակցային ուղիների և քաղաքական համաձայնությունների միջոցով: Այս տրամաբանության մեջ Բաքվի հարցը դիտարկվում էր որպես երկարաժամկետ ազդեցության միջոց, այլ ոչ թե անհապաղ ռազմական նվաճման նպատակ [7, էջեր 78-82]:

Մինևույն ժամանակ, ադրբայժի քննադատական վերլուծությունը ցույց է տալիս, որ գերմանա-թուրքական հակասությունները Կովկասում չէին սահմանափակվում միայն մարտավարական անհամաձայնություններով: Դրանք արտացոլում էին երկու տերությունների տարբեր պատկերացումները տարածաշրջանային կարգի վերաբերյալ. մեկ դեպքում՝ տնտեսական և քաղաքական վերահսկողության վրա հիմնված մոդել, մյուս դեպքում՝ ուղղակի ռազմական վերահսկման և պանթուրքիստական աշխարհաքաղաքական ծրագրերի իրականացում [7, էջեր 85-90]: Այս դիտարկումները թույլ են տալիս գերմանական քաղաքականությունը Անդրկովկասում մեկնաբանել որպես սահմանափակ ռեսուրսներով իրականացվող ազդեցության փորձ, որը բախվում էր դաշնակցային հարաբերությունների ներսում առկա կառուցվածքային հակասություններին:

1918 թ. ապրիլի 27-ին Կոստանդնուպոլսում կնքված թուրք-գերմանական գաղտնի համաձայնագիրը ցույց էր տալիս Անդրկովկասում ազդեցության գոտիների սահմանման փորձը: Փաստաթուղթը նախատեսում էր ազդեցության ոլորտների բաժանում՝ ձևավորելով նոր քաղաքական ճարտարապետություն. Օսմանյան կողմին վերագրվում էին որոշ ռազմավարական ուղղություններ ու հաղորդակցություններ, իսկ մնացած տարածքները ենթադրվում էր ընդգրկել գերմանական ազդեցության ներքո՝ տնտեսական և քաղաքական ներկայություն ապահովելու համար:

1918 թ. օգոստոսի 27-ին Գերմանիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև կնքված Բրեստ-Լիտովսկի լրացուցիչ պայմանավորվածությունը ևս ցույց է տալիս, որ Բեռլինը փորձում էր Բաքվի նավթի խնդիրը լուծել նաև

պայմանագրային-դիվանագիտական ճանապարհով: Սակայն գործնական զարգացումները վկայեցին, որ Օսմանյան ռազմաքաղաքական ղեկավարությունը կարողացավ իրականացնել սեփական ռազմավարական օրակարգը՝ հաճախ չհամաձայնեցնելով այն գերմանական հաշվարկների հետ: Թուրք-մուսավաթական գաղտնի պայմանավորվածությունների տրամաբանությունը բացում էր ուղղակի ճանապարհ դեպի Բաքու, իսկ Նուրի փաշայի զորախմբերի առաջխաղացումը դարձավ այն մեխանիզմը, որով թուրքական կողմը փաստացիորեն «առաջ անցավ» գերմանական ծրագրերից:

1918 թ. սեպտեմբերի 15-ին թուրքական զորքերը գրավեցին Բաքուն՝ համագործակցելով տեղական քաղաքական կենտրոնների հետ: Այս գործողությունը խորացրեց գերմանա-թուրքական հակասությունները՝ քանի որ Բեռլինի համար դա նշանակում էր նավթային հանգույցի նկատմամբ վերահսկողության փաստացի կորուստ և ազդեցության սահմանափակում Կովկասում [2, էջեր 198-205; 5, էջեր 221-226]: Գերմանական դիվանագիտական և ռազմական շրջանակներում Բաքվի կորուստը ընկալվեց որպես ռազմավարական ձախողում. Գերմանիան չկարողացավ կանխել Բաքվի անցումը թուրքական վերահսկողության ներքո, և այդպիսով՝ չստացավ այն ռեսուրսային ու հաղորդակցային լծակները, որոնց վրա կառուցվում էր «կովկասյան ծրագրի» տնտեսական բաղադրիչը:

Գերմանական մտեցումը դրսևորվում էր զգույշությամբ՝ ընտրելով դիվանագիտական փոխգործակցություն Հայաստանի, Վրաստանի և Թիֆլիսի ազգային կառույցների հետ: Նրան կարևոր էր Ռուսաստանի հետ պայմանագրային համագործակցությամբ ապահովել Բաքվի նավթի մատակարարումը՝ գերմանական վերահսկողությամբ [13, էջեր 57-59]:

Չնայած Գերմանիան չկարողացավ ստանալ Բաքուն ռազմական քայլերով, սակայն նրա ազդեցությունը նկատելի էր՝ նավթային ճանապարհների վերահսկմամբ և տնտեսական գործընթացում ակտիվ դերակատարմամբ [12, էջեր 82-85]: Այս ամենը ընդգծում է, որ Բաքվի հարցը դիտարկվում էր Գերմանիայի համար ոչ միայն որպես ռազմական խնդիր, այլև տնտեսական իշխանության և աշխարհաքաղաքական հավասարակշռման գործիք:

Սակայն մրցակցությունը երկարաժամկետ չտնեց: 1918 թ. հոկտեմբեր-նոյեմբերին Գերմանիայի և Օսմանյան Թուրքիայի ընդհանուր ռազմական պարտություններն ու քաղաքական փոփոխությունները հանգեցրին նրանց ծրագրերի արագ փլուզմանը տարածաշրջանում: Թուրքիան կնքեց Մուդրոսի զինադադարը (1918 թ. հոկտեմբերի 30), իսկ Գերմանիայում նոյեմբերյան հեղափոխությունն ու Արևմտյան ճա-

կատի պարտությունը հանգեցրին Վրաստանից զորքերի դուրսբերման և Կովկասյան ուղղության փաստացի փակման: Այսպիսով, երկու տերությունների նախագծերը Հարավային Կովկասում ներառյալ Բաքվի նավթի շուրջ հաշվարկները, կարճ ժամանակում կորցրին գործնական նշանակությունը:

Եզրակացություն

1918 թվականին Բաքվի խնդիրը ձևավորեց գերմանա-թուրքական մրցակցության առանձնահատուկ դաշտ Անդրկովկասում: Թուրքական կողմը ձգտում էր ռազմական միջոցներով վերահսկել քաղաքը՝ այն դիտարկելով պանթուրքիստական ռազմավարության և Կասպից ավազանում դիրքեր ամրապնդելու առանցքային հենակետ: Գերմանիան, հակառակը, փորձում էր ապահովել տնտեսական և քաղաքական մուտք՝ նավթը դարձնելով ոչ միայն ռեսուրս, այլ նաև ռազմավարական լծակ՝ հաղորդակցությունների վերահսկման և տարածաշրջանային ազդեցության սահմանման համար: Սակայն դաշնակիցների շահերի տարբերությունը, ինչպես նաև պատերազմի ավարտի արագ զարգացումները, խափանեցին Բեռլինի ծրագրերը: Բաքուն մնաց թուրքական ռազմական վերահսկողության կարճատև փուլում, իսկ հետո՝ պատերազմական համակարգի ընդհանուր փլուզման պայմաններում, հարցը տեղափոխվեց այլ միջազգային դերակատարների օրակարգ:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Allen, W. E. D., & Muratoff, P.** (1953). *Caucasian Battlefields: A History of the Wars on the Turco-Caucasian Border, 1828–1921*. Cambridge University Press.
2. **Hovannisian, R. G.** (1971). *The Republic of Armenia. Vol. 1: The First Year, 1918–1919*. University of California Press.
3. **Kappeler, A.** (2001). *The Russian Empire: A Multiethnic History*. Routledge.

4. **Kress von Kressenstein, Friedrich Freiherr.** *Berichte aus dem Kaukasus: Erinnerungen eines deutschen Generalmajors*. Berlin: Mittler & Sohn, 1919, <https://encyclopedia.1914-1918-online.net/article/kre-von-kressenstein-friedrich-freiherr/?format=pdf>
5. **Lehnstaedt, S.** (2016). *Imperial Germany and the First World War, 1914–1918*. Bloomsbury Academic.
6. **Mikaberidze, A.** (Ed.). (2015). *Conflict and Conquest in the Islamic World: A Historical Encyclopedia*. ABC-CLIO.
7. **Paitschadse, D.** (1989). *General Der Artillerie a.D. Friedrich Freiherr Kress von Kressenstein "Meine Mission Im Kaukasus"*.
8. **Reynolds, M. A.** (2011). *Shattering Empires: The Clash and Collapse of the Ottoman and Russian Empires 1908–1918*. Cambridge University Press.
9. **Shaw, S. J.** (1977). *History of the Ottoman Empire and Modern Turkey, Volume II: Reform, Revolution, and Republic*. Cambridge University Press.
10. **Adam Tooze** (2014), *Why the First World War Matters* Today Foreign Affairs, Vol. 93, No. 4, <https://adamtooze.com/wp-content/uploads/2020/08/Tooze-World-War-I-A-Great-War-Under-the-Condition-of-Democracy-.pdf>
11. **Painter, D. S.** (2012). *Oil and the American Century: The Political Economy of U.S. Foreign Oil Policy, 1941–1954*. Johns Hopkins University Press, https://www.cispea.it/wp-content/uploads/2018/12/D_Painter-Oil-and-American-Century.pdf
12. **Gachechiladze, Revaz** *Georgia and the Caucasus in the World System* (Tbilisi: Universal Publishing House, 2020)
13. **Պեռոսյան, Գ.** (2023). Հայաստանի Հանրապետության միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը 1918 - 1920 թթ. (գիրք առաջին). – Երևան: ԵՊՀ հրատ., 2023. – 484 էջ <https://doi.org/10.46991/ysuph/9785808425996>

Շժանա / Հանձնվել է՝ 22.12.2025
 Рецензирована / Չրախոսվել է՝ 29.12.2025
 Принята / Ընդունվել է՝ 09.01.2026